Հ. Հ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԿԻԼԻԿԻԱՅԻ 1909 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾԸ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԹՈՒՐՔԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ

Ադանայի ջարդերուն պատասխանատուները ճշտելու գործին մեջ եթե Զոհրապ չըլլար, թերևս ջարդվողները հանցավոր հոչակվեին։

Երվանդ Օտյան[1]

Մեր սրբազան պարտքը համարելով հայ տաղանդավոր նովելիստ ու հասարակական գործիչ Գրիգոր Զոհրապի հարցին անդրադառնալ սույն հոդվածի վերջում, առայժմ նշենք, որ հայ մեծանուն գրող Երվանդ Օտյանի՝ մեր բնաբանում բերված այն միտքը, թե Ադանայի կոտորածների ժամանակ «ջարդվողները», այսինքն՝ հայերը, քիչ էր մնում «հանցավոր հռչակվեին», իր ժամանակի համար ամենևին պատահական ու անհիմն չէր։ Բանն այն է, որ այդ կոտորածների համար հայերին պատասխանատու ճանաչելու և նրանց մեղադրելու համար քիչ ջանք չգործադրվեց նոր, սահմանադրական Օսմանյան կայսրության օրենսդիր օրգանում՝ մեջլիսում, իսկ մեր օրերում, անապացույց մնացած և անհիմն այդ մեղադրանքները դեռ շարունակում են «հաստատել» ու «ապացուցել» կայսրության շրջանի ղեկավար քաղաքական գործիչներն իրենց հիշողություններում և ժամանակակից թուրք պատմաբաններն իրենց պատմական աշխատություններում։ Թուրք պատմաբանների օրինակով, այդ դեպքերին նույնպիսի տենդենցիոզ մեկնաբանություններ են տալիս նաև արևմտաեվրոպական ու ամերիկյան բուրժուական որոշ պատմաբաններ։

---

1 Երվանդ Օտյան, Երկեր, Հայպետհրատ, Երևան, 1956, էջ 668։

Այդ ամենի հետևանքով, Կիլիկիայի 1909 թվականի հայկական կոտորածների պատասխանատվության հարցում ստեղծվել են տարբեր մոտեցումներ, տարբեր գնահատականներ ու կարծիքներ՝ իրարամերժ ու հակասական։ Քանի որ Կիլիկիայի արյունալի դեպքերը տեղի են ունեցել 1909 թվականի ապրիլի 13-ի (մարտի 31-ի) հետադիմական հեղաշրջման հաջորդած այն 13 օրում, երբ երիտասարդ թուրքերը երկրում կորցրին իշխանությունը և վերստին դրության տեր դարձավ Աբդուլ Համիդ II սուլթանը, ամենից ավելի տարածում գտավ այն կարծիքը, որ այդ կոտորածները հանդիսացել են այդ արյունարբու սուլթանի ձեռքի գործը։ Այս տեսակետը պաշտպանողները կամ հարցը խորը չեն ուսումնասիրել և կամ պարզապես հետապնդել են քաղաքական նպատակ՝ պաշտպանել երիտթուրքերին հնարավոր ամբաստանություններից։ Մյուսները, չժխտելով այդ տեսակետը, ենթադրել կամ անվիճելի են համարել երիտթուրքերի մեղսակցությունը այդ ոճիրին[2]։

Բոլոր այդ կարծիքների մեջ մինչև հիմա էլ դեռ անորոշ է մնում այն հարցը, թե այդ ջարդերը տապալված վարչակարգի վերջին արարքն էին արդյոք, թե ընդհակառակը, նոր Թուրքիայի առաջին գիտակցված շարժումը[3]։ Սույն հոդվածում փորձ է արվում ի մի բերելով այդ հարցում եղած տարբեր կարծիքները, արխիվային փաստաթղթերի և վերջին ժամանակներս հրապարակ հանված այլ նյութերի հիման վրա որոշ չափով պատասխան տալ այդ հարցին։

* * *

«Ասիական ժողովուրդների զարթոնքի» համաշխարհային պատմական խոր պրոցեսը, որը առանձնապես լայն թափ ստացավ ռուս-ճապոնական պատերազմից և 1905—1907 թթ. ռուսական հեղափոխությունից հետո[4], չէր կարող իր անմիջական ազդեցությունը չունենալ հեղափոխության օրրանին՝ Ռուսաստանին այնքան մոտ գտնվող օսմանյան լայնածավալ ու բազմազգ կայսրության վրա։ Այդ բուրժուական հեղափոխությունը սուլթանական Թուրքիայի ժողովուրդների սրտում զարթեցրեց ազգային ու սոցիալական դարավոր ճնշումից ազատագրվելու հույսը և ցույց տվեց այդ նպատակին հասնելու իրական ուղին։

---

[2] Տե՛ս օրինակ, V. Berard, La Mort de Stamboul, Paris, 1913. p. 209.

[3] Տե՛ս Հր. Պաստրմաջյան, Հայոց պատմություն, Բ հատոր, Անթիլիասլիբանան, 1958, թարգմ. ֆրանս., էջ 178։

[4] Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 15, էջ 266։

Սակայն սուլթանական Թուրքիայի ժողովուրդների ազատագրական շարժումները մեկ միասնական հոսանքի մեջ համախմբելու գործին մեծ խոչընդոտ էին հանդիսանում մուսուլմանական մոլեռանդությունը, բուրժուական նացիոնալիզմը և իմպերիալիստական տերությունների մեքենայությունները։ Աբդուլ Համիդի բռնակալական ռեժիմը տապալելու համար այդ բոլոր ազգային ցաք ու ցրիվ ուժերից մեկ ընդհանուր ճակատ կազմելու խնդիրը իրենց վրա վերցրին երիտթուրքերը, որոնք, ապահովելով այդ ընդհանուր նպատակով միավորած ուժերի անվերապահ աջակցությունը, երբ հեղափոխական իրադրությունը արդեն հասունացել էր ինչպես ներքաղաքական, այնպես էլ միջազգային տեսակետից, անցան վճռական դրոհի և հարկադրեցին Աբդուլ Համիդ II սուլթանին վերականգնել 1876 թվականի սահմանադրությունը և նշանակել պառլամենտական ընտրություններ։ Իրենք՝ երիտթուրքերն էլ կայսրությունում դառնալով դրության տերը, հռչակեցին վաղուց խոստացած «եղբայրության», «հավասարության», «ազատության» և միայն իրենց՝ թուրքերի համար հասկանալի, սպեցիֆիկ «արդարության» լոզունգները։

Այսպես կատարվեց թուրքական այդ գրեթե անարյուն հեղափոխությունը։ Եվ քանի որ այն կատարեցին բուրժուական հեղափոխականները, ապա նրա խնդիրները դրանով էլ ավարտվեց, մնալով որպես վերնախավային հեղափոխություն։ Եվ չնայած, որ հեղափոխությունից հետո, որոշ ժամանակ, երկրում տիրում էր ընդհանուր խանդավառություն և ոգևորություն, տեղի էին ունենում թուրք և ոչ թուրք ժողովուրդների եղբայրացման ցույցեր, թուրքերի կողմից ճնշված ազգերը իրենց լրիվ հաշիվ էին տալիս, որ թեպետ երիտթուրքերը խոսքով հանդես էին գալիս որպես կայսրության բոլոր ժողովուրդների միասնության ու հավասարության կողմնակիցներ, բայց իրականում նպատակ ունեին պահպանել թուրքերի գերիշխանությունը ոչ-թուրքերի նկատմամբ, այն տարբերությամբ միայն, որ թուրքական ֆեոդալական ճնշմանը փոխարինելու էր գալիս բուրժուական ազգային ճնշումը։

Թուրքիայում ծավալված ազգային-ազատագրական պայքարը իր զարգացման ճանապարհին բախվում էր երիտթուրքերի հակադեմոկրատական ու հակաժողովրդական շովինիստական քաղաքականության հետ, քանի որ, ինչպես նշել է Վ. Ի. Լենինը, երիտթուր-

քերի «այդ հեղափոխությունը թշնամի է Օսմանյան կայսրության մեջ սկսվող պրոլետարական պայքարին»[5]։

Հեղափոխությունից հետո երիտթուրքերը խուսափեցին անմիջականորեն նոր կառավարության կազմի մեջ մտնելուց և այն գլխավորելուց։ Բայց մայրաքաղաքում և տեղերում ստեղծած իրենց բազմաթիվ կազմակերպությունների միջոցով նրանք իրենց խիստ վերահսկողության տակ էին պահում ինչպես կառավարական ու պետական ամբողջ ապարատը, այնպես էլ իշխանության տեղական օրգանները։ Եթե այս ընդհանուր պատկերին ավելացնենք նաև այն, որ երիտթուրքերը շատ շուտ մոռացության տվեցին հանդիսավոր կերպով հռչակած «ազատության», «եղբայրության» և «հավասարության» լոզունգները, ապա հասկանալի կդառնա երկրի տարբեր ազգությունների և խավերի խոր դժգոհությունը երիտասարդ թուրքերի ստեղծած ռեժիմից։

Երկրում ծնունդ առած ընդհանուր դժգոհության պայմաններում առանձնապես ուժեղացավ ծայրահեղ հետադիմական տարրերի ակտիվությունը, որոնք պայքար էին մղում «Միասնություն և առաջադիմություն» կուսակցության լծի դեմ և ձգտում էին վերականգնել հին ռեժիմը[6]։ Այդ նպատակով Ստամբուլի կայազորի զինվորները «Ախրար» (լիբերալների) կուսակցության և հետադիմական մուսուլմանական հոգևորականության պրոպագանդայի ազդեցության տակ 1909 թվականի ապրիլի 13-ին (հին տոմարով մարտի 31-ին) խռովություն բարձրացրին։ Խռովարարները հիմնականում գվարդիական զորամասերն էին, որոնք կազմում էին սուլթանի պահակախումբը և նվիրված էին նրան։ Պրոպագանդան վարել էին այնքան գաղտնի, և խռովությունը տեղի ունեցավ այնքան անակնկալ, որ նրանք, ովքեր պետք է ամենից ավելի վախենային նրա հաջողությունից, չկարողացան ոչինչ ձեռնարկել այն կանխելու համար։ Հեղաշրջումից հետո Թուրքիայի Ազգային ժողովը Սենատի նախագահ Սայիտ փաշայի գլխավորությամբ մայրաքաղաքից մեկնեց Սան-Ստեֆանո և մնաց այնտեղ մինչև Կոստանդնուպոլսի ազատագրումը «գործողության» բանակի կողմից[7]։

Երկրում տիրող քաղաքական այսպիսի տակնուվրայությունների պայմաններում, երբ նոր ռեակցիոն ռեժիմը դեռ իր դիրքերը չէր

---

5 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 15, էջ 268—269։

6 Տե՛ս Новая история стран зарубежного Востока, т. II, стр. 4.

7 Տե՛ս, I. H. Danişmend, Izahlı Osmanlı Tarihi Kronolojisi, cilt IV, s. 375.

ամրապնդել երկրում և վստահ չէր իր հարատևությանը, մայրաքաղաքից հեռու ընկած Ադանա քաղաքից երկրով մեկ տարածվեց հայկական կոտորածների զարհուրելի լուրը, կոտորածներ, որոնք մի քանի օրվա դադարից հետո նոր ուժով վերսկսվեցին վիլայեթի մյուս գրեթե բոլոր հայաշատ քաղաքներում ու գյուղերում և որոնց հետևանքով զոհվեցին մոտ 30 հազար անմեղ հայեր, երեք հարյուր կալվածք հրո ճարակ դարձավ, հափշտակվեց ավելի քան տասը հազար գլուխ անասուն, իսկ նյութական վնասները հասան մինչև քսան միլիոն թուրքական լիրայի (մոտավորապես 500 միլիոն ֆրանկի)[8]։

Հայ մեծանուն պատմաբան Լեոն «Անցյալից» գրքում, կրկնելով իր ժամանակ տարածված այն տեսակետը, թե Աբդուլ Համիդը «բանի դեռ իր արյունոտ գահի վրա էր,... կատարում էր իր վերջին հրեշավոր ոճիրը, հրամանագրելով հայերի ջարդ Ադանա քաղաքում և շրջանակներում»[9], միաժամանակ միանգամայն տեղին նշում, է, որ երիտթուրքերի կուսակցությունն ամեն ջանք գործադրում էր ցույց տալու համար, որ Ադանան ամբողջովին հին ռեժիմի ոճիրն է. «Բայց,— շարունակում է Լեոն,— այս ջանքերը չպսակվեցին կատարյալ հաջողությամբ։ Մնացին շատ կասկածներ (ընդգծումը մերն է։—Հ. Մ.), որոնք ապացուցում էին, թե երիտթուրքերն էլ անմեղ չեն»[10]։

Ռուս պատմաբան Դուրկո-Կրյաժինը Ադանայի դեպքերը վերագրում է հին ռեժիմին։ Նա գրում է. «...15—20.000 հայեր, կոտորվեցին հակահեղափոխության պահին Կիլիկիայում՝ այս է «արյունարբու սուլթանի» մռայլ տիրապետության վերջին հանրագումարը»[11]։

Ադանայի հայ բնակչության կոտորածը նույն կերպ է ներկայացնում նաև ամերիկացի բուրժուական պատմաբան Ջոզեֆ Գրինը. «Պետք է նշել,— գրում է նա,— որ Կոստանդնուպոլսի խռովության իսկ օրը Ադանա քաղաքի ու նահանգի մուսուլմանական բնակչությունը, որին հրահրում էին Կոստանդնուպոլսից, հարձակվեց իր քրիստոնյա հպատակների վրա և մի քանի օրվա ընթացքում կողոպտեց ու սպանեց 20.000 հայ, ավերեց բազմաթիվ քրիստոնեա-

---

[8] Georges Brézol, Les Turcs ont passé la... La verité sur les massacres d'Adana de 1909, Paris, 1911, p. 12.

[9] Լեո, Անցյալից։ Հուշեր, թղթեր, դատումներ, Թիֆլիս, 1925, էջ 227։

[10] Նույն տեղում։

[11] В. А. Гурко-Кряжин, История революции в Турции, М., 1923, стр. 60.

կան գյուղեր, եկեղեցիներ, դպրոցներ, սպանեց մեծ թվով վարդապետների, այդ թվում ամերիկացի երկու միսիոներների և 20 բողոքական պաստորի, ինչպես նաև կոլեջի մի պրոֆեսորի... Խռովությունն ու կոտորածը հանդող հրեշավոր սուլթան Աբդուլ Համիդի վերջին ճիգերն էին»[12]։

Եվ վերջապես, ֆրանսիացի բուրժուական պատմաբան Ա. Սարրուն, 1912 թվականին հրատարակած «Երիտասարդ Թուրքիան և հեղափոխությունը» գրքում Կիլիկիայի հայկական կոտորածը ամբողջապես համարում է «հին ռեժիմի», այսինքն՝ Աբդուլ Համիդի իշխանության գործը, իսկ երիտթուրքերին ներկայացնում է իբրև երկրում «կարգ ու կանոնը և խաղաղությունը պահպանելու ձգտող միակ ուժը։ «Այն ժամանակ,— գրում է Սարրուն,— երբ Կոստանդնուպոլսում բռնկեց այդ ահարկու հետադիմական շարժումը, Ադանայում ռեակցիան սկսեց մի սարսափելի կոտորած... Երիտասարդ Թուրքերին հավատարիմ մնացած պաշտոնյաների օգնությամբ «Միասնություն և առաջադիմություն» կուսակցության կոմիտեներին ու ենթակոմիտեներին հաջողվեց պահպանել կարգ ու կանոնը։ Բայց Ադանայում ռեակցիան նպաստավոր հող գտավ, իսկ պաշտոնյաներն էլ կարծես ոչինչ չէին նախաձեռնում, որպեսզի կանխեն կոտորածները հրահրողների սադրանքները։

Այս նողկալի ոճրագործությունը վարկաբեկեց հին ռեժիմին, Համիդյան ռեժիմին, այլ ոչ թե երիտթուրքերին, ինչպես ոմանք ներկայացնում են։ Ճիշտ չէ խոսել այդ դեպքերի մասին առանց ցույց տալու դրանց սերտ կապը 1909 թվականի ապրիլի 13-ի Կոստանդնուպոլսի դեպքերի հետ։ Ստույգ է, որ դա նույն կուսակցությունն է, որը կազմակերպել է ռեակցիան մայրաքաղաքում և հրամայել իրականացնել զարհուրելի կոտորածը Ադանայում»[13]։

Անգլիացի ժամանակակից բուրժուական պատմաբան Բեռնարդ Լյուիսը «Ժամանակակից Թուրքիայի ծագումը» գրքում, խոսելով 1909 թվականի ապրիլյան դեպքերի մասին, գրում է. «Հետադիմական շարժումը բնավ միայն Ստամբուլով չսահմանափակվեց։ Կասկածելի զուգադիպությամբ (ընդգծումը մերն է —Հ. Մ.) խռովության ալիքը տարածվեց Անատոլիայում։ Իրադարձությունները առանձնապես վատ ընթացք ստացան Ադանայի շրջանում և իրենց գագաթնակետին հասան հազարավոր հայերի կոտորածի ժամանակ։ Այդ դեպ-

---

[12] Joseph K. Greene, Leavening the Levant, New-York, 1916, p. 42.
[13] A. Sarrou, La Jeune-Turquie et la Revolution, Paris, 1912, p. 89—90.

քերի պատասխանատվությունը տարբեր կերպ է բաշխվում։ Այն ժամանակ, երբ Եվրոպան սարսափած էր թուրքերի դաժանություններից, մուսուլմանական կարծիքը վիրավորված էր հայերի թվացող հանդգնությունից ու քրիստոնեական Եվրոպայի կեղծավորությունից»[14]։

Բերված վկայությունները բավական հիմք են տալիս մտածելու, որ սահմանադրական Թուրքիայում ոչ թուրք (ասենք նաև հենց թուրք) ազգությունների նկատմամբ գործադրված ազգային ու սոցիալական ուժեղ ճնշման դրսևորումների, կոտորածների ու բազմաթիվ ապօրինությունների համար իրավամբ «արյունարբու սուլթան» անունը ստացած Աբդուլ Համիդը որոշ պատմաբանների աչքում ծառայել է որպես քավության նոխազ։

Վերոհիշյալ պատմաբանների առաջ քաշած վերսիան անհիմն է թվում նաև այն պատճառով, որ դժվար է ենթադրել, թե երկրի հետադիմական ուժերը կամ նրանց գլուխ կանգնած Աբդուլ Համիդ սուլթանը հեղաշրջումից հետո առանց երկրում իրենց իշխանությունն ամրապնդելու, դիմեին իրենց բախտի համար ճակատագրական այնպիսի մի արկածախնդրության, ինչպիսին տասնյակ հազարավոր հայերի ջարդն էր մայրաքաղաքից հեռու ընկած վիլայեթում։ Բացի այդ, ստորև մենք կաշխատենք ցույց տալ, որ իր բոլոր մանրամասնություններով լավ նախապատրաստված ու կազմակերպված այդ կոտորածները մեկ գիշերվա գործ չէին, որ հայերի ջարդ կազմակերպելու հարցը լուծված է եղել դեռ այն ժամանակ, երբ երկրում տեր ու տնօրեն էին երիտթուրքերը հանձինս «Միասնություն և առաջադիմություն» կուսակցության տեղական կոմիտեների ու տեղական իշխանության օրգաններում նստած նրանց գործակալների։ Եվ քանի որ գնալով ավելի ու ավելի է բացահայտվում երիտթուրքերի մեղսակցությունը Ադանայի վիլայեթի հայ բնակչությանը կոտորելու սև գործին, հիշյալ կուսակցության նախկին պարագլուխները և ժամանակակից թուրք բուրժուական պատմաբանները, խեղաթյուրելով պատմական իրողությունները, սկսեցին նոր ջանքեր գործադրել, որպեսզի «ապացուցեն», թե Կիլիկիայի հայկական կոտորածների անմիջական պատասխանատուներն ու մեղավորները իրենք՝ հայերն էին, որոնք «այդպիսի կատաղի ապստամբություն բարձրացնելով, նպատակ ունեին պատճառ ստեղծել եվրո-

---

[14] Bernard Lewis, The Emergence of Modern Turkey, London, 1961, p. 212.

պական տերությունների միջամտության համար և Կիլիկիայում հիմնել հայկական իշխանություն»[15]։

Երիտասարդ թուրքերի պարագլուխներից Ջեմալ փաշան, որը Ադանայի արյունալի դեպքերից չորս ամիս հետո, օգոստոսի կեսերին նշանակվել էր Ադանայի վիլայեթի նահանգապետ և, իր խոսքերով ասած, «իրենից ավելի լավ ոչ ոք չէր կարող ծանոթանալ հոգեբանական այն նախադրյալներին, որոնք առաջ բերին այդ կոտորածը»[16], անտեսելով, ավելի ճիշտ կոպիտ կերպով խեղաթյուրելով պատմական իրական փաստերը, Ադանայի ջարդերի համար մեղավոր է համարում միայն հայերին, դեռ ավելին, միայն մեկ մարդու, այսպես կոչված վերածնյալ հնչակյան կուսակցության անդամ Մուշեղ եպիսկոպոսին։ «Ես անձամբ համոզված եմ,— գրում է նա,— որ այդ արյունալի դեպքերի գլխավոր մեղավորը մոնսինյոր Մուշեղն էր...»[17]։

Ջեմալ փաշայի այս տեսակետը բաժանում է նաև մեր օրերի թուրք պատմաբաններից Իսմայիլ Համի Դանիշմենդը, որը իր «Օսմանյան պատմության ժամանակագրությունը» քառահատոր աշխատության չորրորդ հատորում գրում է. «Ադանայի դեպքը» կազմակերպել էր այնտեղի հայ հեղափոխական եպիսկոպոս, Մուշեղ անունով արյունարբու հոգևորականը»[18]։

Զգալով, որ լայն մասշտաբներ ընդունած Ադանայի կոտորածը մեկ մարդու ձեռքի գործ համարելու վերսիան ակնհայտորեն կարող է անհավանական թվալ, Ջեմալ փաշան, աշխատելով քիչ թե շատ ճշմարտանման դարձնել այդ մեղադրանքը, ստիպված է այնուամենայնիվ նշել, որ «...պատահածի համար պատասխանատվությունը հավասարապես ընկնում է նաև նահանգապետի վրա»[19], որի մեղքը, իբր, եղել է այն, որ նա «պետք է հասկանար, թե ինչպիսի վտանգ էր ներակայացնում այդ մարդը և միջոցներ ձեռնարկեր նրան վնասազերծելու համար»[20]։

Ջեմալի պնդմամբ, Մուշեղը մարդիկ ուղարկեց Եվրոպա՝ հայերի համար զենք գնելու նպատակով[21], և ապա, «վերջապես, ապ-

---

15 I. H. Danişmend, ayni eser, cilt IV, s. 373.

16 Записки Джемаль Паши. 1913—1919. Тифлис, 1923, стр. 210.

17 Նույն տեղում, էջ 214։

18 I. H. Danişmend, ayni eser, s. 374.

19 Ջեմալ փաշա, նույն տեղում։

20 Նույն տեղում։

21 Նույն տեղում էջ 212։

րիլի 14-ին, մոնսինյոր Մուշեղի հրամանով հայերը առաջինը սկսեցին նշանավոր «Ադանայի գործը»։ Ադանայում, Տարսուսում, Համիդիեում, Միղմիսում, Էրզինում, Դյորթ-Յոլում, Ազրայիլում, մի խոսքով, ամենուրեք, որտեղ հայեր կային, սկսվեց կոտորած։ ...Կառավարությունը այնքան անօգնական գտնվեց նույնիսկ վիլայեթի գլխավոր քաղաքում, և նրա շփոթվածությունը այն աստիճանի հասավ, որ իշխանություններն իրենք այսպես ասած «մոբիլիզացիայի» հրաման տվեցին մուսուլմաններին, որպեսզի կանխեն հայերի հարձակումը նրանց վրա»[22]։

Ամերիկայի Միացյալ Նահանգներում Թուրքիայի նախկին դեսպան Ահմեդ Ռուսթեմ բեյը ևս իր «Համաշխարհային պատերազմը և թուրք-հայկական հարցը» գրքում, որը լույս է տեսել 1918 թվականին Շվեյցարիայում, Կիլիկիայի կոտորածների ամբողջ պատասխանատվությունը գցում է հայ բնակչության և նրա քաղաքական կուսակցությունների վրա։ Նա գրում է. «1909 թվականի ապրիլի 12-ի հակահեղափոխությունը, որը թեև տեղի ունեցավ ավելի շուտ, բան այդ պրոպագանդան կտար իր բոլոր ցանկալի արդյունքները[23], կոմիտեների համար (հեղինակը նկատի ունի հայկական կուսակցությունները —Հ. Մ.) բարենպաստ առիթ ծառայեց իրենց պլանների իրականացման համար։ Օգտվելով այն հանգամանքից, որ կայսրությունում ժամանակավորապես բացակայում է կառավարությունը և կարծելով, թե նրա վերջին ժամը հնչել է ապրած սարսափելի ճգնաժամում, նրանք որոշեցին ընդհարում հրահրել մուսուլմանների և հայերի միջև Ադանա քաղաքում և նրա շրջակայքում։ Այդ նպատակով նրանք ամեն միջոց գործադրեցին, որպեսզի երկու տարրերին դրդռեն միմյանց դեմ»[24]։

Ռուսթեմ բեյը, ջարդերի պատասխանատվությունը բարդելով

---

22 Նույն տեղում, էջ 213—214։

23 «Պրոպագանդա» ասելով Ահմեդ Ռուսթեմ բեյը ակնարկում է հայ ժողովրդի բնական ձգտումը՝ իր հայրենիքը՝ Թուրքահայաստանը ազատագրված տեսնել թուրքական բռնակալությունից։ Նա գրում է. «Հայերի ղեկավարների գործողությունները հանգեցրին այն բանին, որ նրանց ցեղակիցների ճնշող մեծամասնությունը միաձուլվեց մեկ համերաշխ խմբի մեջ, որը միահամուռ կերպով որոշել էր օգտվել նպաստավոր հանգամանքների առաջին իսկ բերումից, որպեսզի իր ազգի համար ստեղծի թիչ թե շատ ինքնավար մի Հայաստան Արևելյան Անատոլիայի նահանգներում, որ նա համառորեն հայտարարում է որպես իրենը, հակառակ վիճակագրության և պատմության հերքումներին»։ Ahmed Rustem Bey, La guerre mondiale et la question turco-arménienne, Berne, 1918, p. 30.

24 Rustem Bey, p. 30—31.

հայերի վրա, դրանով իսկ ձգտում է արդարացնել թուրքերի վայրագ հարձակումները հայերի վրա, խեղաթյուրում կոտորածների իրական պատկերը, դրանք ներկայացնելով որպես հավասար զինված ընդհարում կայսրության երկու տարրերի միջև։ Այդ նպատակի համար նա զուգահեռ է անցկացնում Աբդուլ Համիդի կազմակերպած կոտորածների և 1909 թվականի ապրիլյան ջարդի միջև։ Նա գրում է. «Էական տարբերություն կա 1895—96 թվականներին տեղի ունեցածի և Ադանայի ողբերգության միջև։ Աբդուլհամիդյան ռեակցիան սառնասրտորեն գործում էր հայերի դեմ, որոնք առանց պաշտպանության դիմավորում էին իրենց ճակատագիրը։ Կիլիկիայի մուսուլմանների ռեակցիան մի անմիջական և ուղղակի հակահարված էր իրենց նման լավ զինված հայերի պրովոկացիային։ Այնտեղ մենք գործ ենք ունեցել իսկական կոտորածի հետ։ Այստեղ պայքար է, կռիվ երկու տարրերի միջև։ Դրան ուղեկցած ծայրահեղությունները եղել են փոխադարձ»[25]։

Պատմական փաստերը կեղծելու այսպիսի փորձերից հետո հաջորդ քայլը պետք է լիներ կեղծել կոտորածներին զոհ գնացած մարդկանց թիվը՝ նվազեցնել հայերինը և չափազանցնել մուսուլմաններինը և ապացուցել, որ «հայերը կանգ չէին առնում կանանց ու երեխաներին սպանելու առաջ»[26]։ Ջեմալ փաշան իր հիշողություններում նշելով, որ Ադանայի այդ արյունալի դեպքերին զոհ գնացին 17.000 հայ և 850 մուսուլման[27], միաժամանակ չգիտես ում հետ վիճելով տարօրինակ տրամաբանությամբ պնդում է, թե «այդ թվերը ցույց են տալիս, որ եթե հայերը այստեղ մեծամասնություն կազմեին, ապա արդյունքները հակառակը կլինեին»[28]։

Հայկական կոտորածները նույն ոգով էլ ներկայացնում է մեր օրերի պանթուրքիստ պատմաբան Էսատ Ուրասը, որը իր «Հայերը պատմության մեջ և հայկական հարցը» գրքում մահմեդականներին ներկայացնելով որպես տուժող կողմ, Ադանայի կոտորածի պատասխանատվությունը գցում է հայերի վրա, անմեղ դուրս բերում

---

[25] Rustem Bey, p. 33. Այս մասին տե՛ս նաև Ն. Սարգսյան, Ռ. Սահակյան, Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության ենթափոխումը թուրք պատմագրության մեջ, Հայպետհրատ, Երևան, 1963, էջ 16—17։

[26] Записки Джемаль Паши, стр. 214.

[27] Տե՛ս նույն տեղում։

[28] Նույն տեղում։

երիտթուրքերին, իսկ ջարդերին զոհ գնացած հայերի թիվը համարում ընդամենը հազար մարդ[29]։

Ահա, վերջապես, երիտթուրքերի ապագա տրիումվիրատի անդամներից մեկի, հայ ժողովրդի արյունարբու դահիճ Թալաաթ փաշայի վկայությունները Ադանայի դեպքերի մասին։ Իր «Հիշողություններ»-ում Թալաաթը, զուգահեռ անցկացնելով Ռումելիում բուլղարների և Անատոլիայում հայերի ծավալած ազատագրական շարժումների միջև, նշում է, որ դրանք բուլղարների և հայերի կողմից հրահրվում էին «սոսկ քաղաքական նպատակներով», այն է՝ Եվրոպայի միջամտության օգնությամբ «իրենց համար ապահովել ինքնավար վարչություն և ապա անկախություն»[30]։ «Ադանայի դեպքերը,—շարունակում է նա,—բացառապես նրանց (հայերի —Հ. Մ.) գործերն են, որոնք ի վերջո վերագրվել են թուրք ժողովրդին»[31]։ Ինչպես հայտնի է, Ադանայի դեպքերից որոշ ժամանակ անց Թալաաթը դառնում է Օսմանյան կայսրության ներքին գործերի մինիստր։ «Իբրև անկողմնակալ պետական գործիչ,— պատմում է նա,— ես ուշադրությամբ քննեցի Ադանայի դեպքերի մասին եղած պրովոկացիոն փաստաթղթերը։ Հետաքննող հանձնաժողովի հայ անդամների վկայությամբ ես հաստատվում է, որ դեպքերը եղել են հայերի սադրանքի արդյունք։ Հանձնաժողովի անդամներից մեկը՝ Հակոբ Պապիկյանը անձամբ խոստովանեց ինձ»[32]։

Այսպիսով, ժամանակակից Թուրքիայում ամեն ջանք գործադրվում է թաքցնելու երիտթուրքերի կատարած ոճրագործությունները, որի համար նրանք բռնել են փաստերը նենգափոխելու իրենց սովորական ուղին։ «Թուրքական կառավարությունը,— 1909 թվականի մայիսի 15-ին հաղորդում է Կ. Պոլսում ռուսական դեսպան Զինովևը—ըստ երևույթին աշխատում է նսեմացնել Ադանայի խառնակությունների նշանակությունը և, ի միջի այլոց, խառնակությունների ժամանակ սպանվածների թվի մասին տարածում է այնպիսի տեղեկություններ, որոնք խիստ հակասում են մեր տեղական

---

29 Esat Uras, Tarihte Ermeniler ve Ermeni meselesi, Ankara, 1950, s. 575. Տե՛ս նաև Ե. Սարգսյան, Ռ. Սահակյան, նշվ. աշխ. էջ 16։

30 Tal'at Paşa, Hatıraları, Istanbul, 1946, s. 14. «Հիշողություններ»-ի հայերեն թարգմանությունը տե՛ս ՀՍՍՀ ԳԱ արևելագիտության սեկտորի արխիվում, էջ 12։

31 Նույն տեղում։

32 Նույն տեղում, էջ 15։

գործակալներից իմ և մի քանի օտարերկրացի ընկերակիցներիս ստացած տեղեկություններին...»[33]։

Ֆրանսիացի պատմաբան Ժորժ Բրեզոլը իր «Այստեղից Թուրքերն են անցել ...Ճշմարտությունը 1909 թվականի Ադանայի կոտորածների մասին» չափազանց արժեքավոր գրքում, որի հրապարակումը մի մեղադրական ակտ էր՝ ուղղված երիտթուրքերի դեմ, ուշագրավ տեղեկություններ է բերում կոտորածներին նախորդած ժամանակաշրջանի որոշ իրադարձությունների մասին, որոնք լույս են սփռում ջարդերի նախապատրաստական փուլի վրա։ Մուսուլմանները, գրում է նա, արդեն իրենց թվական կազմով մի պատկառելի ուժ էին ներկայացնում վիլայեթում, «մանավանդ որ, որոշ ժամանակից ի վեր, առանց ակնհայտ պատճառի (ընդգծումը մերն է։— Հ. Մ.) Թուրքերն սկսեցին ամեն տեսակ զենքի առատ պաշարներ կուտակել։ Չորս կամ հինգ ամսում Ադանայի շուկայում վաճառվեց ավելի քան 30.000 թուրքական լիրայի (մոտավորապես 700.000 ֆրանկի) ամեն տրամաչափի զենքեր՝ գերմանական, ավստրիական ու բելգիական արտադրության ատրճանակներ, հրացաններ ու կարաբիններ»[34]։

Էրզրումի ռուսական գլխավոր հյուպատոսը մարտի սկզբին հաղորդում էր Կոստանդնուպոլիս՝ ռուսական դեսպան Զինովևին, որ «Երիտթուրքերը սկսել են շտապ կարգով զինել մուսուլմաններին, առանձնապես քաղաքների դաղաշներին, որոնք հայտնի են իրենց սանձարձակությամբ և հայերի նկատմամբ տածած ատելությամբ։

Ոչ այդ գործողությունները, ոչ դրանց պատճառները, իհարկե չէին կարող գաղտնի պահվել, և խուլ հուզումը մուսուլմանների շրջանում արդեն Էրզրումի վիլայեթից բացի ընդգրկել է Բիթլիսի, Սվասի, Խարբերդի և Դիարբեքիրի շատ վայրեր»[35]։

Կոտորածներից դեռ շատ առաջ ամբողջ Անատոլիայում թուրք մուսուլմանական բնակչության շրջանում ռեակցիոն տարրերը սկսել էին տարածել լուրեր, թե հայերը զինվում են և նպատակ ունեն կոտորել մահմեդականներին ու առևանգել նրանց կանանց[36]։ Կոտո-

---

33 Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов. Под ред. проф. М. Г. Нерсисяна, Ереван, 1966, стр. 169.

34 Georges Brézol, op. cit., p. 8.

35 Геноцид армян..., стр. 167.

36 Հ ա մ բ ա ր ձ ու մ Ա շ ճ յ ա ն, Ատանայի եղեռնը և Գոնիայէ հուշեր, Նյու-Յորք, 1950, էջ 149։ Տեղեկագիր Հակոբ Պապիկյանի, Կ. Պոլիս, 1919, էջ 23։

ցածներին նախորդած օրերին մոլեռանդ ամբոխի գրգռված վիճակը արդեն հասել էր գագաթնակետին։

Ջարդերից մի քանի օր առաջ, արձանագրել է Հ. Պապիկյանը իր «տեղեկագրի» մեջ, «Իթիհադ» թերթի խմբագրության կողմից կազմակերպված մի միտինգում «բոլոր իսլամ դասակարգերը — պաշտոնյա, կրոնական, զինվոր և գործավոր — կաշխատին զանգվածային հարձակման մը պատրաստվելու համար»[37]։ Միտինգում վալին հայտարարում է, որ զինապահեստը «կողոպտված է այս գերգրգռված ամբոխի կողմէ»։ Բայց քանի որ, շարունակում է Հ. Պապիկյանը, զինապահեստը պահպանվում էր պահակախմբի կողմից և պահակներն էլ առանց դիմադրության չպետք է թողնեին նրանց մտնել պահեստ, և որ ապացուցված չէ, թե որևէ բախում տեղի է ունեցել պահակների ու ժողովրդի միջև և որ «միևնույն բանը պատահած է նահանգին բոլոր այն մասերուն մեջ՝ ուր այս պատճառներով ջարդեր տեղի ունեցած են, կասկած չի թողուր, որ զենքերը բաշխված են կառավարական հրամանով»[38]։ Եվ քանի որ «կառավարական հրամանը» տրված պետք է լիներ երիտթուրքերի դրածոների կողմից, իսկ կուտակված զենքերը պետք է մի օր կրակեին և գրգռված մոլեռանդ ամբոխի արհեստականորեն ներշնչված ատելությունն էլ քրիստոնյաների նկատմամբ պետք է պոռթկար, ապա մնում էր միայն առիթը, որը ներկայացավ, երբ լուր ստացվեց Ստամբուլում տեղի ունեցած ռեակցիոն հեղաշրջման մասին։

Կոտորածներն սկսվեցին ամենից առաջ Ադանա քաղաքում՝ առանց հայերի կողմից պրովոկացիայի կամ հարձակման առիթ ստեղծելու, որոնց կարիքը նրանք չունեին, քանի որ չէին հետապնդում ոչ անջատվելու և ոչ էլ հատկապես մահմեդականներին կոտորելու նպատակ։ «...Կարելի չէ եղած գտնել փաստ մը՝ որ կարենար ենթադրել տար թե հայերը կը սնուցանեին հայրենասիրական զգացմունքներու հակառակ գաղափար մը, այսինքն՝ անջատողականություն»[39]։

Ինչպես նշում են աղբյուրները, 1908 թվականի ապրիլի 1-ի (14-ի) օրը Ադանա քաղաքի շուկայում և բանուկ թաղերում արտակարգ աշխուժություն և ոգևորություն էր նկատվում մահմեդական բնակչության շրջանում։ Զինված թուրքերն ու քրդերը վխտում էին քաղաքում։ Հայերը կանխազգալով ինչ-որ վատ բան, փակում են

---

37 Նույն տեղում, էջ 25։

38 Նույն տեղում, էջ 25—26։

39 Նույն տեղում, էջ 33։

իրենց խանութները և շտապում տուն՝ նախ որևէ պրովոկացիայի առիթ չտալու և ապա պաշտպանվելու համար[40]։ Բայց վալին, իր մոտ կանչելով հայոց հոգևոր պետերին ու քաղաքի երևելիներին, պահանջում է, որ հայերը վերադառնան իրենց խանութները և վերսկսեն աշխատանքը։ Իրականում, քաղաքի իշխանությունների նպատակն էր հայերին զրկել ինքնապաշտպանության բոլոր միջոցներից և դյուրացնել նրանց բնաջնջումը մահմեդականների կողմից[41]։ Եվ երբ հայերը, տեղի տալով վալիի պահանջին, վերադառնում են իրենց աշխատանքին, սկսվում է կոտորածը։ «Հետո ամբոխը հարձակած է հայ թաղին վրա,— գրում է Հ. Պապիկյանը,— սպաննելու համար բոլոր անոնք որ տուն ապաստանած կամ հոնկե բնավ դուրս չէին ելած։ Այն ատեն է միայն, որ հայերը գտնըվելով օրինավոր ինքնապաշտպանության մը հարկին տակ, զինված դիմադրություն մը ցույց տված են, ուրկեց պատահած են երկուատեք կորուստներ։ Սակայն, որովհետև ոչ մեկ հայ երբեք չէ հարձակած իսլամ թաղին վրա, և որ բոլոր իսլամ սպանվածները գտնըված են հայ թաղին կամ ասոր մոտակա դիրքերուն վրա, բացարձակորեն անկարելի է պնդել, որ հայերու ձեռք առած միջոցը պաշտպանողական և թուրքերունը հատկապես պատրաստված հարձակողական չըլլա»[42]։

Երեք օր ու դիշեր շարունակվեցին ջարդերն ու արյունահեղությունը քաղաքում[43]։ «Մահմեդականների վայրագությունները Ադանայի վիլայեթում հասել էին հրեշավոր չափերի,— հաղորդում է ռուսական դեսպան Զինովևը։—Սպանված քրիստոնյաների, հատկապես հայերի թիվը հասնում է մինչև 15.000 մարդու... Ադանա քաղաքը այլևս գոյություն չունի, իսկ ամբողջ ունեցվածքը և պաշարները կողոպտված լինելու հետևանքով կոտորածներից խուսափած քրիստոնյա բնակչությունը սկսում է սովի մատնվել»[44]։ Հետագա օրերին կոտորածները ծայր առան Ադանայի վիլայեթի գրեթե բոլոր սանջաքներում։ Հազիվ էին դրանք կարճ ժամանակով դադարել, երբ ջարդերը նորից վերսկսվեցին մի քանի օրից հետո

---

40 Տե՛ս Հ. Աշճյան, նշվ. աշխ., էջ 16։ G. Brezol, op. cit., p. 17. «Ժամանակ», 1 ապրիլի 1909 թ.։ Տեղեկագիր Հ. Պապիկյանի, էջ 26։

41 Տե՛ս Տեղեկագիր Հ. Պապիկյանի, էջ 26։ Аданские черные дни, стр. 15.

42 Տեղեկագիր Հ. Պապիկյանի, էջ 27։

43 Տե՛ս Аданские черные дни, стр. 7.

44 Геноцид армян..., стр. 168.

ռումելիական զորքերի ժամանման հետ միասին, որոնք եկել էին Թուրքական կառավարության կարգադրությամբ իբր կարգ ու կանոն վերահաստատելու համար[45]։

Կոտորածներին զոհ գնացին ոչ միայն հայերը։ Դահիճները «Ատանայի քրիստոնյաներուն մեջ ոչ մեկ խտրություն դրած են»[46], որի հետևանքով զոհ գնացին նաև հարյուրավոր հայ կաթոլիկներ, բողոքականներ, հույներ, կաթոլիկ սիրիացիներ, սիրիացիներ, քաղդեացիներ և այլն[47]։

Կոտորածների այդ ողբերգական օրերին հայերը դարձյալ իրենց մեջ դատն կորով՝ պաշտպանելու իրենց ընտանիքը, ունեցվածքն ու պատիվը։ Ինչպես նշում են աղբյուրները, այնտեղ, որտեղ թեկուզև փոքրիկ խմբերով հայերը կարողացան զենքը ձեռքին դիմել ինքնապաշտպանության, նրանք վերապրեցին և փրկվեցին անխուսափելի կոտորածից։ Ինքնապաշտպանական հերոսական մարտեր տեղի ունեցան Քեսաբում, Զորք-Մարղվանում, Ֆընդջաքում, Շեյխ-Մուրադում, Շարդերեում, Սիսում, Կարսում (շշփոթել Կարս քաղաքի հետ), Հաճընում և այլուր[48]։

Ադանայի վիլայեթի հայ բնակչության այդ օրհասական օրերին դտնվեցին բարեկամներ ու կարեկցողներ, որոնք օգնության ձեռք մեկնեցին հայերին՝ ընդդեմ Թուրք ջարդարարների։ «Գրեթե ամենուրեք,— գրում է «Ադանայի սև օրերը» գրքի հեղինակը,— մոլեռանդ և դաղդաղած ամբոխի մեջ գտնվում էին առանձին պայծառ անհատներ, բնակչության ամբողջ խավեր, որոնք, չենթարկվելով ընդհանուր հոսանքին, իրենց պահում էին միանգամայն մարդկայնորեն, նույնիսկ հերոսաբար»[49]։ Տարսուսի ֆելլահները ապաստան տվեցին հազարավոր հայերի, որոնք հրո ճարակ դարձած իրենց տներից փախչելով, ապաստան էին փնտրում դաշտերում ու այգիներում։ «Պակաս մարդասիրություն չցուցաբերեցին Աֆրինի հովտի բրդերը, Զուքուրովայի կիսավաչկատուն յուրուքները և չերքեզները[50]։

Ինչպես հայտնի է, Ադանայի վիլայեթում կազմակերպված ջարդերին զոհ գնաց մոտ 30.000 հայ և այլազգի բնակիչ։ Սա ընդ-

---

45 Նույն տեղում։

46 Տեղեկագիր Հ. Պապիկյանի, էջ 15։

47 Նույն տեղում, էջ 15—16։

48 Аданские черные дни, стр. 21.

49 Նույն տեղում, էջ 17—18։

50 Նույն տեղում։

հանուրի կողմից ընդունված թիվն է։ «Եթե մենք հաշվի առնենք Անտիոքի, Բեյլանի, Ալեքսանդրետի, Մարաշի և Հալեպի վիլայեթի մյուս վայրերի կոտորածները,— գրում է Ժորժ Բրեզոլը,— ապա կարող ենք առանց որևէ հնարավոր կասկածի պնդել, որ հայ ազգը կորցրեց երեսուն հազար մարդ»[51]։ Իսկ Ֆաուզ փաշան, որը կոտորածների օրերին սուլթանական Թուրքիայի ներքին գործերի մինիստրն էր, լկտիաբար հայտարարում էր Կոստանդնուպոլսի ժուռնալիստներին. «Ինչպե՞ս էիք ուզում, որ Կիլիկիայի 40 հազարանոց հայ բնակչությունից 30.000 սպանված լիներ, քանի որ մեր վիճակագրական տվյալների համաձայն դեռևս կան 25.000 կենդանի մնացած հայեր»[52]։ Կառավարությունը նախ պաշտոնապես հայտարարել էր, թե իբր «սպանված է 1.500 ոչ իսլամ և 1.900 իսլամ, բայց հետաքննությունից հետո ստիպված եղավ ընդունելու 6.000 թիվը»[53]։

Ինչպես հայտնի է, կոտորածներից մեկ ամիս հետո, մայիսին, թուրքական կառավարությունը նշանակեց հատուկ հանձնաժողով՝ ջարդերի պատճառներն ու հանգամանքները ճշտելու և զեկուցագիր ներկայացնելու նպատակով։ Այդ հանձնաժողովը կազմվեց օսմանյան պառլամենտի հայ դեպուտատներ Գրիգոր Զոհրապի և Վարդգեսի համառ պահանջներով[54]։ Հանձնաժողովի մեջ բացի Ֆալիդ բեյից և Յուսուֆ Քեմալ բեյից, մտնում էին նաև Մանաստիրի վիլայեթի դատական քննիչ Հարություն Մոստիջյանը և Օսմանյան կայսրության պառլամենտի էդիռնեի դեպուտատ, թուրքասերի համարում ունեցող[55], երիտթուրքերի «Միասնություն և առաջադիմություն» կուսակցության անդամ[56] Հակոբ Պապիկյանը, որի վրա երիտասարդ թուրքերը մեծ հույսեր էին դնում այդ առաքելությանն ուղարկելիս։ Սակայն Հ. Պապիկյանը այդ հույսերը չարդարացրեց, և Քեմալ բեյից անկախ կազմելով իր տեղեկագիրը (որից վերևում մենք մեջբերումներ կատարեցինք), վերադարձավ Կոստանդնուպոլիս և հայ հասարակայնությանը ծանոթացրեց իր եզրակացություններին։ Կատարած անաչառ քննությունից հետո նա եկավ այն գլխավոր եզրա-

---

51 G. Brézol, op. cit., p. 369.

52 Ibidem, p. 365.

53 *Տե՛ս «Տեղեկագիր» Հ. Պապիկյանի, էջ 17։*

54 Геноцид армян..., стр. 502.

55 *Ջ. Կիրակոսյան, Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Երևան, 1967, էջ 48։*

56 *Ազատարար շարժուն բանակին հաղթական մատրն ի Կ. Պոլիս։ Կ. Պոլիս, 1909, էջ 197։*

կացության, որ «Իթթիհատ և Թերաքքը կուսակցության անդամները Ատանայի վայրագ եղերերգության կազմակերպման և գործադրության մասնակից են»[57]։ Օգոստոսի սկզբներին նա ելույթ էր ունենալու պառլամենտի նիստում, բայց դրանից մի քանի օր առաջ մահացավ բոլորովին առեղծվածային մահով[58]։

Հ. Պապիկյանի մահից հետո երիտասարդ թուրքերի մերկացման գործը շարունակեց Գր. Զոհրապը թուրքական պառլամենտում ունեցած իր փայլուն ելույթներով։ Հետագայում (1911 թվականին) նա պատմում էր իր այդ ելույթների մասին. «Հավասարության բացակայությունը կը դտնեք ամեն տեղ, նույնիսկ օսմ. խորհրդարանին մեջ։ Քրիստոնյա տարրը երկրին բնակչության մեկ երրորդը կամ առնվազն մեկ չորրորդն է. օսմ. խորհրդարանին մեջ մեկ յոթերորդն է... Ամենեն մեծ և ահավոր ապացույցը թե Սահմանադրություն հռչակելով ժողովուրդին վարքը ու բարքը չեն փոխվիր՝ Ատանայի արյունալի աղետն է... Պիտի լսեք թե խուժանին գործն է այդ, բայց ինչ ընթացք բռնեց, օսմ. երեսփ. ժողովը ինչ ըրավ... Ատանա խրկված զինվորական ատյանները միասին կախաղան բարձրացուցին ջարդողը և ջարդվողը։ Երբ օսմ. խորհրդարանին բեմեն Ատանայի կոտորածը պատմեցի և զայրույթս հայտնեցի, գիտեք թե ինչ աղմուկներով ձայնս խեղդել ուզեցին։ Կառավարության ներկայացուցիչը հայերուն անհիմն վերագրումներ ըրավ և ծափերով իսլամ երեսփոխանները ողջունեցին այս հայտարարությունները... Մեր առաջին գործը եղավ այս աղետին պատասխանատվությունը ճշտել տալ, ուզեցինք հայ տարրին կողմե առանց պատճառ տված ըլլալու ջարդի սկսված ըլլալը և հայոց... անմեղությունը հռչակվի... Վերջապես դահլիճեն ստացանք ծանոթ հայտարարությունը։... Անանխրնթաց դեպք մըն էր օսմ. կառավարությենեն ձեռք բերել այսպիսի պաշտոնական խոստովանություն մը»[59]։

Այդպիսի պաշտոնական հայտարարությունից հետո, երբ կոտորածների պատասխանատվությունը հայ բնակչության վրա գցե-

---

57 Տեղեկագիր Հ. Պապիկյանի, էջ 42։

58 Геноцид армян..., стр. 502. Հ. Աշճյան, նշվ. աշխ., էջ 52։ Տեղեկագիր Հ. Պապիկյանի, էջ 6։

59 Ար շ. Ա լ պ ո յ ա ճ յ ա ն, Անհետացող դեմքեր։ Գրիգոր Զոհրապ (իր կյանքը և գործը), Կ. Պոլիս, 1919, էջ 205—206։ Խոսքը թուրքական կառավարության 1909 թվականի հուլիսի 31-ի հայտարարության մասին է, որով հայերը անմեղ էին ճանաչվում կոտորածների համար։ Հայտարարության տեքստը տե՛ս Հ. Աշճյանի մեջբ. աշխ., էջ 55—57։

լու հույսը չարդարացավ, երիտթուրքերը սկսեցին որոնել մի նոր բավության նոխազ... Աբդուլ Համիդը։ Բայց, ինչպես մենք աշխատեցինք ցույց տալ, այստեղ ևս նրանք հիմնավոր մեղադրանքներ չկարողանալով գտնել կամ ստեղծել, ստիպված եղան խոստովանել, որ «չհաջողվեց հաստատել Աբդուլ Համիդի մեղսակցությունը այդ կոտորածներին...»[60]։

Կովկասյան զինվորական օկրուգի գլխավոր շտաբի պետի պաշտոնակատար գեներալ-մայոր Կարպովը 1909 թվականի հունիսի 5-ին հաղորդում էր. «Կոտորածի և կողոպուտի բոլոր դեպքերին ամենաջերմ մասնակցություն են ունեցել զինվորները. սա մի փաստ է, որը հաստատվել է հարյուրավոր վկաների և այժմ Ադանայում գործող քննչական հանձնաժողովի կողմից։ Ավելին, Մերսին ժամանած նիզամի 3-րդ կորպուսի առաջին զորամասերը, որոնք ամբողջապես գտնվում են երիտասարդ թուրք սպաների ձեռքում, կատարում են նույնպիսի գազանություններ, ինչ որ այստեղի կորպուսի նրանց ընկերները. սրանք ևս փաստեր են, որ չեն ժխտում նաև իրենք՝ երիտթուրքերը, բայց բացատրում են հետադիմական տարրերի պրովոկացիայով։ Սկզբում երիտթուրքերը Ադանայի կոտորածի մեղքը վերագրում էին Աբդուլ Համիդի մեքենայություններին, որը ցանկանում էր դրանով ուշադրությունը շեղել Կոստանդնուպոլսում նախապատրաստվող հեղաշրջումից...»[61]։

«Իսկական մեղավորներն ու մարդասպանները՝ իշխանություններն ու մակեդոնական (երիտթուրքական) զորքերը ոչ էլ մտածում էին թաքնվել, ասենք դրա համար նրանք պատճառ էլ չունեն, քանի որ նրանք են հանդիսանում զինվորական դատարանների ու քննչական հանձնաժողովների անդամները, և նրանք էլ այժմ պահպանում են կարգը երկրում, որտեղ և նրանք կոտորել են 25—30 հազար քրիստոնյա։ Այն, ինչ տեղի է ունենում զինվորական դատարաններում, հատկապես Ադանայում արդարադատության անվան տակ. չարագույն ծաղր է նրա նկատմամբ»,— գրում էր վերոհիշյալ շտաբի պետի մեկ այլ պաշտոնակատար գեներալ-մայոր Յուդենիչը 1909 թվականի հուլիսի 15-ին[62]։

Հետագայում երիտասարդ թուրքերը, դառնալով իմպերիալիստական Գերմանիայի ռազմական դաշնակիցը և իրենց անպարտելի կարծելով, մտան արդեն սկսված առաջին համաշխարհային պա-

---

60 Геноцид армян..., стр. 172—173.

61 Նույն տեղում, էջ 171—172։

62 Նույն տեղում, էջ 172։

տերաղմի մեջ և այլևս չէին աշխատում թաքցնել իրենց ղեկավար դերը Ադանայի կոտորածների մեջ։ Ահա ինչ էր հայտարարում Երիտթուրքերի կոմիտեի անդամ, դոկտոր Նազիմը մի խորհրդակցությունում, որտեղ ինքը հանդես էր գալիս որպես գլխավոր ղեկուցող։ «Եթե 1909-ի մեր Ադանայի և այլ վայրերու մեջ կատարել ավածին նման (ընդգծումը մերն է։—Հ. Մ.) տեղական ջարդերով պիտի գոհանանք... Օգուտի տեղ վնասը անպայման է»[63]։ Սա արդեն ժողովրդի մի ամբողջ հատվածի բնաջնջման ծրագիրն էր, որ Երիտթուրքերը ոճրագործ կերպով սկսել էին կազմել և շուտով կենսագործելու էին։

Ադանայի կոտորածները մինչև հոգու խորքը ցնցեցին ամբողջ հայ ժողովրդին։ Ամենուրեք լսվում էր նրա արդար բողոքի ձայնը, որին արձագանքում էին նրա լավագույն բարեկամները աշխարհի տարբեր մասերում։ «...Կիլիկիայի ջարդը ճմլեց աղիքներս,— իր նամակներից մեկում գրում էր հայ տաղանդավոր բանաստեղծ Դանիել Վարուժանը։—Ցեղին հոգին արյուն կուլա մեջս, հրդեհված բաղաքներեն եկող ամեն լուր՝ տաք մոխրի պես կթափի գլուխիս և սրտիս վրա։ Հինգ դարեր պետք եղան՝ որպեսզի թուրքերեն մաս մը բաղաքակրթվեր, եվրոպականանար, ինչպես փտած կաթսաները կկլայեկվին. ով գիտե դեռ որչափ հինգ դարեր են պետք և որչափ հայու արյուն՝ մյուս մեծագույն մասին համար։ Երիտասարդ թուրքերը չեն դադրիր Եվրոպայի հասցնելի թե թուրքը ի բնե բարի ժողովուրդ է, տակ հայերու անխոհեմությունն է աղետին սկզբնապատճառը ոճիր-եղած՝ Եվրոպայի հայանպաստ կարծիքին հակադրելու համար, կարծիք մը՝ որ առանց ատոր ալ պոռնկացած է»[64]։

Սովետական արևելագետ Յու. Վ. Մարունովը իր «Երիտթուրքերի բաղաքականությունը ազգային հարցում (1908—1912)» արժեքավոր հոդվածում, նոր փաստերի ու վավերագրերի հիման վրա արդեն անառարկելի կերպով հաստատում է, որ «Ադանայի ջարդը (1909 թվականի ապրիլ), որը տարածվել էր նաև մյուս շրջանների

---

63 مولان زاده رفعت ، تورکیه انقلابنك ایچ یوزی ، حلب ، ۱۹۳۹ ، ص ۸۹—۹۰

Մ ե վ լ ա ն Զ ա դ է Ռ ի ֆ ա թ, Թուրքական հեղափոխությունը և մութ ծալքերը, թարգմ. թուրքերենից, Բեյրութ, 1938, էջ 159—160։ Տե՛ս նաև Ե. Ղ. Ս ա ր գ ս յ ա ն, Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում, 1914—1918, Երևան, 1964, էջ 232։

64 Դ ա ն ի ե լ Վ ա ր ու ժ ա ն, Նամականի, Երևան, 1965, էջ 174։

վրա, նախօրոք նախապատրաստված և հրահրված էր «Միասնություն և առաջադիմություն» կոմիտեի կողմից»[65]։

Միջազգային պրոլետարիատի առաջնորդ Վ. Ի. Լենինը և ՌՍԴԲՄ բոլշևիկյան կենտրոնի օրգան «Պրավդա» թերթը, դասակարգային միանգամայն ճիշտ գնահատական տալով երիտթուրքերի բուրժուական վերնախավային հեղափոխությանը, խոր հետաքրքրություն էին հանդես բերում արևմտահայության ճակատագրի նկատմամբ, ընդսմին ցույց տալով թուրքական բուրժուազիայի ռեակցիոն շովինիստական քաղաքականությունը նրա նկատմամբ։ «Երիտթուրքերն իրենց առաջին իսկ քայլերից, կարծես դիտավորյալ կերպով, սկսեցին իրենցից ետ մղել Օսմանյան կայսրության ժողովուրդների համակրանքը,— գրել է «Պրավդա»-ն 1912 թվականին։— Նրանք դրսևորեցին լիբերալ բուրժուազիայի բոլոր արատներն ու թուլությունները, իսկ մյուս կողմից իշխանության գլուխ անցած զինվորական կաստայի ամբողջ դեսպոտիզմը։ Խոսքով լինելով լիբերալներ, նրանք գործնականում տոգորված էին սևհարյուրակային ամենաթունդ տեսակի նացիոնալիզմով և մոլի բուրժուական էգոիզմով... Նրանց ձգտումն էր՝ թուլացնել Օսմանյան կայսրության մեջ ապրող հայերին... կիրառելով էլ ավելի կոպիտ բնույթի միջոցառումներ, քան կիրառվում էին Աբդուլ Համիդի ժամանակ»[66]։

1913 թվականի հուլիսին «Պրավդա» թերթը, դարձյալ անդրադառնալով հայ ժողովրդի ճակատագրի հարցին, հրապարակում է «Փոքր Ասիան և հայկական հարցը» խորագրով ընդարձակ հոդվածը, որի մեջ կոնկրետ կերպով խոսելով Կիլիկիայի 1909 թվականի ապրիլի հայկական կոտորածների մասին, որոշակիորեն նշում է, որ «ներկա ռեժիմի (այսինքն երիտթուրքերի ռեժիմի—Հ. Մ.) պայմաններում, Ադանայում արդեն կազմակերպվեց 30 հազար հայերի կոտորածը»[67]։

1913 թվականի դեկտեմբերին Մոսկվայում կարդացած հրապարակային մի դասախոսության մեջ Ալ. Մյասնիկյանը, վերլուծելով Օսմանյան կայսրության, այդ «նեխած և քայքայվող դիակի»

---

65 Ю. В. Марунов, Политика младотурок по национальному вопросу (1908—1912). Кратк. сообщ. Инст. нар. Азии, XXX, 1964, Москва, стр. 16.

66 «Պրավդա», 1912 թվականի հուլիսի 27։

67 «Պրավդա», 1923 թվականի հուլիսի 27։ Մեջբերումները արված են ըստ պրոֆ. Ար. Ն. Մնացականյանի «Հայ ժողովրդի ողբերգությունը ռուս և համաշխարհային հասարակական մտքի գնահատմամբ» գրքի, Երևան, 1965, էջ 75—76։

վիճակը, ընդգծում էր, որ «երիտթուրքերի օրոք հայերի դրությունը բոլորովին չլավացավ... այն մնաց նույնը, ինչ որ կար Համիդի օրերին»։ Որպես ապացույց Ա. Մյասնիկյանը վկայակոչում է Ադանայի հայերի կոտորածները[68]։

* * *

Ադանայի խաղաղ հայ բնակչության 1909 թվականի ապրիլյան կոտորածը երիտթուրքերի՝ իշխանության գլուխ անցնելուց և սահմանադրությունը հռչակելուց հետո լայնորեն ծրագրված ցեղասպանության մի ոճիր էր, իր տեսակի մեջ առաջինը սահմանադրական Օսմանյան կայսրությունում։ Եվ բուրժուական պատմագրության բոլոր ջանքերը՝ դրա պատասխանատվությունը գցելու հայերի կամ հին ռեժիմի՝ այսինքն Աբդուլ Համիդի վրա անհիմն են և անապացույց։ Այդ կոտորածը այն նույն ոճրագործ մտքի արգասիքն է, որը ցեղասպանությունը բարձրացնելով մինչև պետական պաշտոնական քաղաքականության աստիճանի, ավելի դաժան ու անագորույն մեթոդներով կիրառեց 1915 թվականին հայ ժողովրդի ամբողջ արևմտահայ հատվածի նկատմամբ։

А. Г. МАРТИРОСЯН

РЕЗНЯ АРМЯН В КИЛИКИИ В АПРЕЛЕ 1909 ГОДА и ВОПРОС ОБ ОТВЕТСТВЕННОСТИ МЛАДОТУРОК

Резюме

В начале апреля 1909 года (по ст. ст.) в городе Адане, а затем и во всем Аданском вилайете и за его пределами развернулись кровавые события, в результате которых за короткий срок времени (за 13 дней) было вырезано около 30 тысяч армян. События развернулись непосредственно после так называемых «событий 31-го марта»—контрреволюционного переворота, в результате чего власть младотурок была свергнута и временно (на две недели) перешла в руки «кровавого султана» Абдул Гамида II. Это обстоятельство дало повод

68 Տե՛ս «Մշակ», 1913 թվականի դեկտեմբերի 25 (Ար. Մնացականյան, նշվ. աշխ., էջ 77—78)։

многим западноевропейским и американским буржуазным историкам возложить вину и ответственность за резню армян на Абдул Гамида. Турецкие же буржуазные историки и государственные деятели того периода, формально не отрицая причастность Абдул Гамида к указанным кровавым событиям, возлагали и возлагают всю вину и ответственность на тех, кого убивали... на армян.

Вопреки вышеуказанным необоснованным утверждениям буржуазных ученых, в настоящей статье делается попытка доказать, что факт заблаговременного вооружения мусульманского населения, разжигания в нем антиармянских настроений и религиозного фанатизма, а затем методичность и организованность проведения операций по истреблению армян с неоспоримой очевидностью доказывают, что эта массовая резня ни в чем не повинного армянского населения Османской империи—одно из первых проявлений человеконенавистической и шовинистической политики истребления народов—геноцида,—была заранее продумана, подготовлена и проведена реакционной младотурецкой партией «Единение и прогресс», которая впоследствии, в период первой мировой войны, став союзницей империалистической Германии, организовала новую подобную резню армян в более широких и чудовищных масштабах.